ՎԵՐԱԲՆԱԿԵՑՈՒՄ ԱՐՑԱԽՅԱՆ ՁԵՒՈՎ

Posted on December 21, 2019 by Keghart



Category: Opinions
Tags: Artsakh, Hovasapian, Repopulation

Սամվել Հովասափյան, Բեռլին, Նոյեմբեր 2019

Տարիներ առաջ էր: Հանդիպում էր կազմակերպվել Բեռլին ժամանած ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի և գերմանահայության միջև: Հարց բարձրացվեց, թե ինչո՞ւ Արցախում ազատագրված տարածքները չեն բնակեցվում: Ավելորդ հարցերից խուսափելու համար, նա կտրուկ պատասխանեց.

– Միջոցներ չունենք:

Սակայն հիմա պարզվում է, որ իրոք, Քաշաթաղում վերաբնակեցում է կատարվել: Թե ինչպե՞ս, լսենք այնտեղ վերաբնակեցված և բոլոր կողմերից ձեռքը կտրված պարոն Վրեժ Հարությունյանի՝ Հայաստանի Հանրապետության իշխանությունների հասցեին ուղղված հանդիմանական խոսքերը…

Հյուրընկալվելով Բաց TV-ում, պարոն Համլետ Ղուշչյանի հարցին, թե նա այս անգամ ինչո՞ւ է Երևան եկել, պարոն Հարությունյանը պատասխանում է.

«Այս անգամ Երևան եմ եկել ինձանից խլված հողերի հարցով Ես նաև հույժ անհանգստացած եմ վերաբնակիչների հետագա ճակատագրի պատճառով. ոչ մի հստակեցում չկա, թե ի՞նչ է լինելու վերաբնակիչների հետագա կարգավիճակը: Չեն հստակեցնում: Առիթից օգտվելով, ուզում եմ երկու հարցում ուղղել մեր պարոն վարչապետին.

– Պարոն Փաշինյան, հիշո՞ւմ եք Ձեր խոսքերը «Անհաշտ պայքար մղել կոռուպցիայի դեմ: Արցախում և Հայաստանում, ոչ մեկ կոռուպցիոներ չպետք է անպատիժ մնա»

Հիմա, պարոն Փաշինյան, երբ ես պայքարում էի ինձանից խլված հողերը ետ ստանալու համար, երկու մեծ կոռուպցիոն գործ եմ բացահայտել: Հիմա ի՞նչ եք ասում, ինչո՞ւ նրանք անպատիժ են: Չէ՞ որ Դուք խոստացաք, չէ՞ որ Դուք Արցախի երաշխավորն էիք, ինչո՞ւ տիրություն չեք անում հատկապես Քաշաթաղին:

Երկրորդ հարցումս եմ ուղղում պարոն Փաշինյանին

– Պարոն Փաշինյան, հիշո՞ւմ եք, օգոստոս 5-ին Դուք Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում ի լուր աշխարհի հայտարարեցիք «Արցախը Հայաստան է և վե՛րջ», բայց ցավոք սրտի, Ձեր ողջ աշխատակազմը, Ձեր տեղակալը, այսպես ասած փոխվարչապետ Տիգրան Ավինյանը, ԱԺ-ի նախագահ Արարատ Միրզոյանը, պատգամավորներ Թագուհի Ղազարյանը, Լիլիթ Մակունցը պնդում են, որ Արցախը այլ պետություն է: Պատասխանեք իմ հարցումին եթե այլ պետություն է, ինչո՞ւ պետք է իմ երկու որդիները մինչև հիմա Արցախի սահմանը պահեին»

Պարոն Փաշինյանը մի քանի օր առաջ Ազգային ժողովի ամբիոնից, ո՛րերորդ անգամ, բարկացած հայտարարեց. *«Մենք նրանց պատեպատ կտանք, կփռենք ասֆալտին»*

Ո՞ւմ, ինչպե՞ս...

Կասկածից վեր է, որ Երևանում լսել են Քաշաթաղի վերաբնակիչների օգնություն ակնկալող նման կանչերը: Իսկ ի՞նչ քայլեր են արել իշխանավորները: Պարզվում է՝ ոչի՛նչ:

Ցավոք, ներկայիս ՀՀ իշխանությունների չափազանց կրավորական և ոչ-կտրուկ գործողությունների պատճառով (որի մասին բազմիցս ահազանգել են հեղափոխությանը սատարող իրազեկ անձինք), այսօր էլ շատ քիչ էական փոփոխություն է կատարվել այսպես կոչված վերնախավի ու ժողովրդի հարաբերությունների միջև: Չափազանց մտահոգիչ է այն փաստը, որ այսօր էլ, թե՛ ՀՀ-ում և թե՛ Արցախում, առանց քրտինքի և անօրինական ճանապարհներով հարստացած ու հղփացած, իրեն ամեն ինչ թույլ տված այդ վերնախավը անարգել վայելում է ապօրինի մեթոդներով իր ձեռք բերած հարստությունը:

Հասկանալի է, որ հեղափոխության հաղթանակից հետո, չէր կարելի, հնարավոր չէր, «կուլակաթափություն» կատարել և բոլոր օրինազանցներին կալանավորել, դատել ու բանտարկել: Բայց պետք է աղաղակող և ավելի ցայտուն անօրինականությունները բացահայտվեին և դրանք կատարողները պատժվեին: Եթե դա չի արվել և չի արվում, ապա ինչպե՞ս կարելի է սպասել, որ ժողովուրդը հասկացողություն ցուցաբերի և ընդունի հետևյալ անհամատեղելի պատկերները.

– Նախկին պաշտոնյաները այսօր էլ բնակվում են միլիոնավոր դոլար արժող այն պալատներում, որոնք նրանք կառուցել են ժողովրդին և պետությանը կողոպտած դրամներով:

– Նրանք կամ նրանց ընտանիքի անդամները փողոցներում վարում են մի քանի տասնյակ, նույնիսկ հարյուր հազար դոլար արժող մեքենաներ, որոնց բազմաքանակությունը Երևանում աչք է ծակում...

– Որոշ անձինք իրենց երեխաների հարսանիքներին հարյուր հազարավոր, նույնիսկ միլիոնավոր դոլար են ծախսում: Ըստ որոշ կայքերի, «ազգային բարերար» Գագիկ Ծառուկյանի դստեր միայն հարսանեկան հագուստը երկու հարյուր հազար դոլարից ավելի արժեք է ունեցել...

– Ծառուկյանի թիկնապահը, օրը ցերեկով, այն էլ շատերի աչքի առաջ, ծեծի է ենթարկում քաղաքացուն, ջարդում նրա ոսկորները, սակայն մնում է անպատիժ: Ավելին, մեղադրյալի աթոռին նստելու փոխարեն, նա այսօր նստած է Ազգային ժողովում և վայելում է անձեռնմխելիության կարգավիճակ: Սա ամոթի խարան է ԱԺ-ի համար: Նմանը ո՞ր երկրում, ո՞ր ժամանակներում կարող էր կատարվել:

Հարց է առաջանում, ինչո՞ւ է օրենքը կանգ է առել Ծառուկյանի կայսրության շեմին: Ինչո՞ւ է պարոն Փաշինյանը նման իրավիճակ հանդուրժում, ինչո՞ւ դատախազության

նախաքննությունը այդպես էլ չշարունակվեց…

Եվ այդ ամենը այն պարագայում՝

– Երբ նախկինի նման, ժողովրդի մեկ երրորդը ծայրահեղ աղքատության պայմաններում է ապրում:

– Երբ բազմազավակ ընտանիքներ դեռ խարխուլ և բնակության համար ոչ-պիտանի տներում են բնակվում:

– Երբ աշխատավոր մարդիկ մատնված են գործատերերի քմահաճույքին, և բավարար աշխատավարձ չստանալով, հազիվ են կարողանում ընտանիք պահել:

Նման ծայրահեղությունների դեմ պայքարելու համար՝ ի՞նչ է արել ներկայիս իշխանությունը, ինչպիսի՞ ծրագրեր ունի նա…

Ի՞նչ ասել է «իզմ»երին չհետևող կուսակցություն (Նիկոլ Փաշինյան): Ի՞նչ ասել է գաղափարազուրկ և միայն գործարարության (բիզնեսի) հրաշագործությանը սպասող իշխանություն…

– Չափազանց մտահոգիչ է, որ այսօր էլ, նախկինի նման, անարգել և ավազակաբարո կողոպտվում է երկրի ընդերքը՝ անդառնալի ու անուղղելի վնասներ հասցնելով Հայաստանի չքնաղ բնությանը, մյուս կողմից՝ ահազանգող չափերով վտանգվում է ազգաբնակչության առողջությունը, որի պատճառով ամեն տարի հազարավոր տարատեսակ հիվանդներ ՀՀ-ից եվրոպական երկրներում ապաստան են փնտրում և բուժօգնություն աղերսում:

Նման իրավիճակը ինչ-որ տեղ ամոթալի է հայ ժողովրդի համար:

Comments



Areg Teryan, Artsakh – 2019-12-28 06:23:00

Es inch miamit eq, tgherq jan...

Es inch miamit eq, tgherq jan...

Mite cheq tesnum, vor ev Hajastanum, ev Artsakhum ishkhum e otarerkrya lrtesakan tsantsy? Mite cheq tesnum, vor ev Nikol Phashinyany, ev Bako Sahakyany - otarerkrya lrtesner en? Ev sranq, ev srants nakhordnery - Levony, Robiky, Serzhik-merzhiknery - nuyn tsantsi taphthphuknern en. Mite parz che? Inchu eq aysqan kuyr, aysqan miamit?

Ays mardkants hatuk nerdrel en, vor tapalen mer azgi azatagrakan payqary, isk duq ekel-boghoqum eq, te inchu ayd lrtesnery chen mtatsum erkri masin? Chen mtatsum, vorovhetev vaghuts havaqagrvats en ajl petutyunneri hatuk tsarajutsyunneri koghmits! Bolory arden khosum en ays masin, isk duq ghum-khdragrer er grum lrtesnerin!

Sa ughaki zavesht e...